

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
 «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԱՐՑԱԽԻՑ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

1	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատ ընտանիքներին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը:
3.	Բարեգործը (բարեգործները)	Միավորված Ազգերի Կազմակերպության Հայաստանյան գրասենյակ (ՄԱԿ), ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Բաֆֆի Հովհաննիսյան, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Գարո Մարտիրոսյան (ԱՄՆ) , Զավեն Ակյան
4	Ծրագիրը կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ՝ 02552842 Հասցե՝ Առաջին Եկմայյան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ.՝ 53-51-67
5	Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ Վանաձոր Սոցիալական բնագավառ
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 85,964,739 (ութսունհինգ միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	<ul style="list-style-type: none"> <li>6-16 տարեկան 130 երեխա, որոնք ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, ամուսնալուծված կամ ազատազրկված ծնողներ ունեն:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>• 30 թոշակառուներ, 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, որոնք անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն:</li> <li>• 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված և Հայասանի Հանրապետությունում բնակություն հաստատած ընտանիքների երեխաներ:</li> </ul> <p>Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափորոշիչներով (ՓԱԲՈՍ նպաստառու, ծնողագուրկ երեխաներ, միակողմանի ծնողագուրկ, մուրացիկ երեխաներ, բազմազավակ կարիքավոր ընտանիքների երեխաներ): Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական թիմում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բուժքույրը և գործառույթների կորդինատորը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոն»-ի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև «ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության» հետ:</p> <p>Արցախից ժամանած երեխաներին տրամադրվող աջակցության վերաբերյալ հայտարարություն է տարածվում սոցիալական մեդիայի էջերում (Facebook, Instagram) և լրատվական կայքերում (hraparak.am, aseko.am, armenpress.am, aravot.am, nt.am), ինչպես նաև Հայաստանի հանրային հեռուստաընկերության էթերում:</p>
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Մույն ծրագիրը նախատեսված է 2022 թ. հունվարի 24-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ	Օրրան ԲՀԿ-ն Վանաձորի Տիգրան Մեծ 4 ա հասցեում գտնվող կենտրոնում՝ մուրացիկ, թափառաշրջիկ և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 130 երեխայի շաբաթը 6 օր տրամադրում է տաք ճաշ և մատուցում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն:

<p>Ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում Covid 19 համավարակի տարածման պատճառով հայտարարված կարանտինով պայմանավորված՝ նախքան ՀՀ կառավարության կողմից գործունեության վերսկսման թույլտվություն ստանալը, Օրրանի բոլոր շահառուները կստանան առաջին անհրաժեշտության սննդամթերքի փաթեթներ: Դասապատրաստման հարցում աջակցությունը կկազմակերպվի հետավար եղանակով: Համավարակով պայմանավորված իրավիճակի բարելավման և ՀՀ կառավարության կողմից գործունեության վերսկսման թույլտվություն ստանալուն պես՝ Օրրանը կվերսկսի իր բնականոն աշխատանքը՝ համաձայն մեր հաստատված ծրագրի:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մսնդի ծրագիր*</li> </ul> <p>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է տրամադրում 30 միայնակ, կարիքավոր ծերերին և հաշմանդամներին: 130 երեխայի և 30 թոշակառուի՝ ամենօրյա սնունդ, նաև՝ խոհանոցային սարքավորումներ և պարագաներ, տարեկան արժեքը կազմում է 44,000,000 դրամ (մթերքի ձեռք բերում՝ 35,000,000 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 2,000,000 դրամ, վարձատրություն խոհանոցի աշխատողներին (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի)՝ 2,000,000 դրամ),</p> <p>Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներին պարբերաբար սննդամթերքով լի փաթեթների տրամադրում, արժեքը՝ 5,000,000 դրամ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Առաջնային բժշկական և հոգեբանական աջակցություն</li> </ul> <p>Առաջին անհրաժեշտության բժշկական և հոգեբանական ծառայություններ՝ տարեկան 1,000,000 դրամ (բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռք բերում՝ 300,000 դրամ, բուժքրոջ վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի տարեկան՝ 700,000 դրամ),</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սոցիալական աջակցություն*</li> </ul>
------------------------------------	---

		<p>Մոցիալական ծառայություն, հազուստ, կոշիկ՝ տարեկան 6,200,000 դրամ (ձմեռային կոշիկի և հազուստի ձեռք բերում ` 5,000,000 դրամ, սոց.աշխատողի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի՝ 1,200,000 դրամ),</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մշակութային ծրագրեր</li> </ul> <p>Մշակութային միջոցառումներ՝ տարեկան 3,000,000 դրամ (մշակութային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի՝ 1,000,000 դրամ, մշակութային միջոցառումներ՝ թատրոնի, համերգի, պատկերասրահ այցի տոմսերի ձեռք բերում նաև մշակութային փառատոնների, ցուցահանդես-տոնավաճառների մասնակցություն՝ 2,000,000 դրամ),</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ակադեմիական ծրագրեր</li> </ul> <p>Դպրոցահասակ երեխաների դասապատրաստման կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր՝ 130 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, տարեկան՝ 8,000,000 դրամ (գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ձեռքբերում՝ 1,200,000 դրամ, վարձատրություն ուսուցիչների (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի՝ 4,000,000 դրամ), ձեռարվեստի խմբակներ՝ կարուճն, փայտամշակում, կավագործություն՝ տարեկան 2,800,000 դրամ (նյութեր՝ ձեռարվեստի խմբակների համար՝ 800,000 դրամ, վարձատրություն ուսուցիչների (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի)՝ 2,000,000 դրամ ),</p> <ul style="list-style-type: none"> <li>• Իրային աջակցություն արտասահմանից</li> </ul> <p>Օտարերկրյա պետություններից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված նվերներ, գրենական պիտույքներ, խաղալիքներ), տարեկան՝ 2,000,000 դրամ,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նվիրատվություն.</li> </ul> <p>Ծայրահեղ կարիքավոր 11 ընտանիքների էլեկտրաէներգիայի, գազի, բնակարանի վարձի վճարման համար, տարեկան ` 6,300,000 դրամ ,</p> <ul style="list-style-type: none"> <li>- 130 երեխաների և 30 թոշակառուի ամենօրյա երթևեկության ծախսեր, տարեկան՝ 6,240,000 դրամ:</li> </ul> <p>Ընդամենը 76,740,000 (յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:</p>
--	--	--

		<p>* Մնդի փաթեթների, կոշիկների, հագուստի բաշխումն իրականացվում է Covid 19 համավարակի կանխարգելմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանմամբ:</p> <p>Բոլոր միջոցառումները իրականացվում են ամբողջ տարի, ամեն օր՝ բացի կիրակի օրերից:</p> <p>Կազմակերպական ծախսերը՝ 9,224,739 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն՝ 85,964,739 դրամ:</p>
10	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Նախատեսվում է</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գազի մատակարարում-3,200,000 ՀՀ դրամ</li> <li>2. Խմելու ջրի մատակարարում (շենքի համար)-200,000 ՀՀ դրամ</li> <li>3. Խմելու ջրի մատակարարում (այգու հողամասի համար, որը հանդիսանում է Օրբանի սեփականությունը և երեխաներն այնտեղ սովորում են այգեգործություն)-50,000 ՀՀ դրամ</li> <li>4. Էլեկտրաէներգիայի մատակարարում-1,700,000 ՀՀ դրամ</li> <li>5. Հեռախոսային կապի մատակարարում-600,000 ՀՀ դրամ</li> <li>6. Մնդամթերքի ձեռքբերում-40,000,000 ՀՀ դրամ</li> <li>7. Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում-106,555 ՀՀ դրամ</li> <li>8. Գազի կաթսայի տեխնիկական գնման ծառայության ձեռքբերում-68,184 ՀՀ դրամ</li> <li>9. Կոշիկի, հագուստի ձեռք բերում-5,000,000 ՀՀ դրամ</li> <li>10. Գրենական պիտույքների, դպրոցական պայուսակների ձեռքբերում-1,200,000 ՀՀ դրամ</li> <li>11. Ձեռարվեստական կենտրոնների համար նյութերի ձեռքբերում-800,000 ՀՀ դրամ</li> <li>12. Գրասենյակային ծախսեր-400,000 ՀՀ դրամ</li> <li>13. Խոհանոցային սարքավորումների (սառնարան, գազօջախ և այլն), պարագաների և նյութերի ձեռքբերում-2,000,000 ՀՀ դրամ</li> <li>14. Բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում-300,000 ՀՀ դրամ</li> <li>15. Երեխաների հանգստի և մշակութային միջոցառումների, նյութերի ձեռքբերում (թատրոն, կինո, պատկերասրահ)-2,000,000 ՀՀ դրամ</li> </ol>

		<p>16. Օտարերկրյա պետություններից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ)-2,000,000 ՀՀ դրամ</p> <p>17. Անվտանգության համակարգ (ձեռք բերել լրացուցիչ տեսախցիկներ և շարժման տվիչ) -400,000 ՀՀ դրամ</p> <p>Ընդամենը-60,024,739 ՀՀ դրամ</p>
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	<ul style="list-style-type: none"> <li>• ջուր՝ 250,000 դրամ,</li> <li>• էլեկտրաէներգիա՝ 1,700,000 դրամ,</li> <li>• հեռախոս, ինտերնետ՝ 600,000 դրամ,</li> <li>• գազ՝ 3,200,000 դրամ,</li> <li>• գրասենյակային ծախսեր՝ 400,000 դրամ,</li> <li>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում՝ 106,555 դրամ,</li> <li>• գազի կաթսայի տեխնիկական զննում՝ 68,184 դրամ,</li> <li>• աշխատավարձ վարչական աշխատողներին (աղմինիստրատոր)՝ 2,500,000 դրամ</li> <li>• անվտանգության համակարգ (տեսախցիկներ և շարժման տվիչ)՝ 400,000 դրամ</li> </ul> <p>Ընդամենը 9,224,739 ՀՀ դրամ:</p>
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>2. ՀՀ առողջապահության նախարարություն</li> <li>3. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարան</li> <li>4. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ</li> <li>5. ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչություն</li> <li>6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն</li> </ol> <p>«Օրբանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների հետ:</p>

13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի՝ 25 կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին,</li> <li>• ամսական և եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին,</li> <li>• գույքագրումն ու բաշխումն իրականացվում է «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով,</li> <li>• ամսական հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններին,</li> <li>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից:</li> </ul>
----	--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱԳԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ